տօնէին իւրոյ, և ինքն ելանէր դատարկ 'ի հաբբատութենէ կալով մնայր մի և նոյն հողագործ որպէս առաջնում, և անխտրանօք կրկին մտանէր առ 'ի գործ իւր հողագործութեան առանց տեղի բամբասելոյ և ծաղրելոյ, և արդ հաւատարմաբար գործ պաշտօնին սորայ նայերուք ընթերցողք, որ սա երբեմն հրամայեաց 'ի վերայ երկու հարիւր քառասուն հազար զօրաց և հատոյց նոցայ ռոճիկ և ծախկարեաց և հարկաւորութեանց նոցայ, և բոլոր բանակին և ոչ ձգեաց 'ի միտս իւր առնուլ լոմանս հինգ յաւելի քան զայն որում 'ի ծերակուտէ խոստացեալ էր ռոճիկ վասն իւր, և զամենայն զոր ինչ որ ստացաւ 'ի ժամանակի իշխանութեան իւրոյ առատաձեռնութեամբ ըստ նմանութեան առատասիրտ զինուորի ծախեաց ըստ վայելուչ պաշտօնին իւրոյ սպարապետի, և մինչդեռ սպարապետ էր եկաց և նմանեցաւ ամենայն զօրութենէ քաջ և հեզ և բարեգոյն, որպէս վայել էր պատուոյն պաշտօնին իւրոյ, յետ կատարելոյ ընթացս պաշտօնին ազատութեան ոչ տխրեցաւ և ոչ անարգեցաւ մտանելն 'ի գործ պաշտօնի ծառայութեան հողագործութեան. զրէ թէ վասն բազում սպարապետաց, որ 'ի տեսչութենէ բազմաց վկայեցին վասն նորայ եթէ կառավարութիւնս երկայնամտութեամբ, և յաղտութիւն քաջութեամբ և 'ի պատճառէ գործոյն բարութեան 'ի ժամ յաղթանակութեան